ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2019թ. թիվ 26/26-3/28959-2019 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 27.05.2019թ. թիվ Ե/40/1250-19 գրության հիման վրա, 30.05.2019թ. թիվ 26/26-3/28959-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գրանտշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Գրանտշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գրանտշին» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

«Գրանտշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/75 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. **<u>Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.05.2019թ. թիվ Ե/40/1250-19 գրությամբ հայտնել է, որ Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի կողմից ս/թ. մարտի 28-ին հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-10/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանների կարիքների համար ձեռք էին բերվելու 2 ՊԳ-2 և 2ՊԳ-3 շոգեգեներատորների իրանի և հենակների արտաքին մակերեսների պաշտպանիչ շերտի նորոգման ճնշման կոնպենսատորի և հենակների արտաքին մակերեսի հակակոռոզիոն պաշտպանիչ լաքաներկային ծածկույթի վերանորոգման աշխատանքներ: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գրանտշին» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և նույն օրը մասնակիցը ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջի մասին:

Հրավերով պահանջվում էր, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը որակավորման փուլում պետք է ներկայացնի տեղեկանք, որ աշխատակիցները (աշխատանքներում ընդգրկված) ընթացիկ տարում անցել են գիտելիքների ստուգում ԱՏ, ՀԱ (ՏԲ, ՊԲ):

«Գրանտշին» ՍՊԸ-ի կողմից 15.042019թ. ստացվել են տեղեկանքներ, որոնցով հավաստում է, որ իր բոլոր աշխատակիցները ընթացիկ տարում անցել են գիտելիքների ուսուցում և ստուգում, ստացել հրահանգ ԱՏ, ՀԱ (ՏԲ, ՊԲ):

Գնահատող հանձնաժողովը 16.04.2019թ. հրավիրված 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստին, արձանագրեց, որ ներկայացված տեղեկանքին կցված չեն աշխատակիցների վկայականների պատճենները և առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրեց մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով մասնակցին շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չի կատարվել, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, մերժել է Ընկերության հայտը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է «Գրանտշին» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 06.06.2019թ. ժամը 12:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2019/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2ՊԳ-2 և 2ՊԳ-3 շոգեգեներատորների իրանի և հենակների արտաքին մակերեսների պաշտպանիչ շերտի նորոգման և ճնշման կոմպենսատորի և հենակների արտաքին մակերեսի հակակոռոզիոն պաշտպանիչ լաքաներկային ծածկույթի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գրանտշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Գրանտշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակի, որին ծանուցվել

է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գրանտշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ ներկայացված տեղեկանքին կցված չեն աշխատակիցների վկայականների պատճենները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է «Գրանտշին» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժել է «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2019թ. թիվ 26/26-3/28959-2019 գրությունը, Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ի 27.05.2019թ. թիվ Ե/40/1250-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի (այսուհետ՝ Օրենք) 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2ՊԳ-2 և 2ՊԳ-3 շոգեգեներատորների իրանի և հենակների արտաքին մակերեսների պաշտպանիչ շերտի նորոգման և ճնշման կոմպենսատորի և հենակների արտաքին մակերեսի հակակոռոզիոն պաշտպանիչ լաքաներկային ծածկույթի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գրանտշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Գրանտշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 14:00-ին նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Գրանտշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող

հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, այն է՝ ներկայացված տեղեկանքին կցված չեն աշխատակիցների վկայականների պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.04.2019թ. ժամը 11:00-ին նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժել է «Գրանտշին» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4-րդ կետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորություն-ների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

Հրավերի ՄԱՍ II-ի 2-րդ կետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի Լրացուցիչ պայմաններում սահմանվել է, որ մասնակիցը որակավորման փուլում պետք է ներկայացնի տեղեկանք, որ աշխատակիցները ընթացիկ տարում անցել են գիտելիքների ստուգում ԱՏ, ՀԱ (ТБ, ПБ):

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն սույն հոդվածով:

Օրենքի նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Կարգի 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) ***<u>եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը</u>*** կամ գնման առարկան անշարժ գույք է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա ***<u>սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.</u>***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Համաձայն www.gnumner.am կայքում հրապարակված Պատվիրատուի 2019թ. Գնումների պլանի՝ սույն Ընթացակարգի գնման առարկայի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը: Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերով Կարգի 64-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի պահանջը չի սահմանվել, այլ Կարգի 64-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, նախատեսվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, որը և ներկայացվել է «Գրանտշին» ՍՊԸ-ի կողմից:

Մինչդեռ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի Լրացուցիչ պայմաններում սահմանվել է, որ մասնակիցը որակավորման փուլում պետք է

ներկայացնի տեղեկանք, որ աշխատակիցները ընթացիկ տարում անցել են գիտելիքների ստուգում ԱՏ, ՀԱ (ТБ, ПБ), այն դեպքում, երբ հրավերով Կարգի 64-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն նույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի պահանջը չի սահմանվել, այլ նախատեսվել է, որ մասնակիցը ներկայացնում է միայն հայտարարություն, որի հիման վրա մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար և Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը ըստ էության չի կիրառվում:

Այդուհանդերձ անդրադառնալով Ընկերության հայտի մերժման հիմնավորմանը, որի համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկանքին կցված չեն աշխատակիցների վկայականների պատճենները, որոնք Ընկերության կողմից չեն ներկայացվել նաև անհամապասխանության վերաբերյալ ծանուցվելուց հետո, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշված է եղել միայն աշխատակիցների՝ ընթացիկ տարում գիտելիքների ստուգում (ԱՏ, ՀԱ (ТБ, ПБ)) անցած լինելու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու անհրաժեշտության մասին և սահմանված չի եղել տեղեկանքի բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող որևէ այլ պահանջ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Գրանտշին» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներումում չի խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2019թ. թիվ 26/26-3/28959-2019 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**